



Ա Ր Ա Ր Ա Տ



ԹԻԻ Գ. — ՇՐՋԱՆ ԻԳ.

1891

ՏԱՐԻ ԻԳ. ՄԱՐՏ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ *).

III.

Յետ բազում ժամանակի դայ Տէր ծառայից այնոցիկ և առնէ Համարս ի մէջ նոցա, եւ մատուցեալ որ զՀինգ քանքար առ, մատոյց այլ ևս Հինգ քանքար, և ասէ. Տէր, Հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ աւասիկ Հինգ այլ ևս քանքար ի վերայ շահեցայ. Ասէ ցնա տէրն իւր, ազնիւ ծառայ՝

բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մո՛ւտ յուրախութիւն տեառն քո, Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր և ասէ. Տէ՛ր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս՝ զոր ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր, ազնիւ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մո՛ւտ յուրախութիւն տեառն քո, Մատուցեալ և որոյ զմի քանքար առեալ էր, և ասէ. Տէ՛ր, գիտէի, զի այր մի խիստ ես, հնձեալ, զոր ոչ սերմանեցեր և ժողովես, ուստի ոչ սփռեցեր, երկեայ՝ գնացի և թագուցի զքանքարն քո յերկրի, արդ՝ աւասիկ քոյդ ցքեզ, Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա. ծառայ՝ չար և վատ, գիտէիր թէ հնձեմ, ուստի ոչ սերմանեցի և ժողովեմ ուստի ոչ սփռեցի։ Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն։ Արդ առէք ի դմանէ զքանքարդ՝ և տո՛ւք այնմ, որ ունիցի զտասն քանքարն, Զի ամենայնի, որ ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ոչն ունիցի՝ և զոր ինչ ունիցին բարձցի ի նմանէ։ Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւորն արտաքին. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։ (Մատ. ԻԵ. 19—30)։

Եղբարք, ուսումնասիրելով ձեզ հետ քանքարների առակն, ես արդէն ցոյց տուի ձեզ անհաւասարութիւնն ու տարբերութիւնն պատասխանատուութեան, որ մեզնից իւրաքանչիւրիս վերայ Աստուած դնում է, ցոյց տուի և այն եղանակն, որով մենք պէտք է համապատասխանենք Նորա դիտաւորութեանց, շահեցնելով ու բազմապատկելով այն շնորհներն, որոնք Նա մեզ պարգևել է։ Այժմ մնում է մեզ բացատրելու այդ առակի վերջաբանը, այն մեծ հանդէսն, որ Նա բովանդակում է և տիրոջ բարձրագոյն վճիռը ծառաներից իւրաքանչիւրի վերաբերմամբ։

«Յետ բազում ժամանակի դայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս ի մէջ նոցա. ահա ինչ պէտք է ամենից առաջ գրաւէ մեր ուշադրութիւնը։

Ուրեմն ապագայում մեզնից համար—հաշիւ կպահանջուի։ Գուցէ դեռ ևս շատ հեռու է համարատուութեան օրը, գուցէ տէրը շատ ուշանայ, գուցէ ծառաները մոռանան Նորա անունն էլ և Նորա կենդանութեան մասին տարակուսեն էլ և մինչև անգամ կանաչ

կարող է բուսնել այն տեղի վերայ, ուր անհաւատարիմ ծառայն թաղել էր իւր քանքարը — բայց ի՞նչ: Տէրն այնուամենայնիւ անպատճառ կգայ և համարը կպահանջէ:

Սովորաբար սրան հաւատ չեն ընծայում. կեանքի փորձը մարդոց մեծ մասին երկբայել է տալիս այս մասին, որովհետեւ աշխարհիս պատմութիւնը յաճախ հակասականն է ներկայացնում մեր այն քրիստոնէական համոզման թէ գոյ անպայման արդարադատութիւն: Կարծես, ներկայիս անարդարութիւնները պէտք է կենդանացնէին և ամրացնէին մեր հաւատը առ բարձրագոյն դատաստանը. բայց անընդհատ փաստերը բոլորովին հակառակն են ցոյց տալիս: Յիշեցէք ձեր մանկութեան այն օրն, երբ ստութիւնն առաջին անգամ դուրս թուաւ ձեր շրթունքներից և կամ երբ դուք առաջին անգամ գիտակցաբար չար գործեցիք. Յիշեցէք, թէ ինչպէս վրդոված էր ձեր խիղճը: Ձեզ թուելիս կլինէր, թէ ամենքը ձեզ վերայ են նայում և կարդում են ձեր սրտի մէջ եղածը, ձեզ թուում էր, թէ ահա երկիրը կպատառուի և ձեզ կուլ կտայ: Եթէ այդպիսի օրը դուք որոտման ձայն լսէիք, անշուշտ դուք նրան Աստուծոյ դատաստանի յայտարար կհամարէիք: Բայց իրօք երկիրը չպատառուեցաւ, դուք կայծակնահար չեղաք, ոչ ոք էլ չիմացաւ ձեր գործած յանցանքն և ձեր խիղճը շուտով հանգստացաւ: «Զի ոչ գոյ ընդդէմ դառնալ յայնցանէ որ վաղվաղակի գործեն զչար, վասն այնորիկ համարձակեցան սիրտք որդոց մարդկան յանձինս իւրեանց գործել զչար: (Եկկղես. Բ. 11): Աստուծոյ ձայնը յայտնում է մեզ այն, ինչ որ պէտք է լինի, աշխարհիս ձայնն ասում է այն ինչ որ է, և մեր սիրտը լսում է վերջինին: Աշխարհիս պատմութիւնը լի է երկբայութեամբ, նորա մի քանի երեսները, կարծես, դառն կատակ ու ծաղր է աստուածային սրբութեան վերայ: Երբեմն ազնիւ և ընտիր գործը ճնշուում է արհամարհանաց ներքոյ, իսկ անարդար ու անիրաւ մարդը յաջողութիւն է ունենում, այնպէս որ ամենքն էլ նրան սիրում են և յարգում, շողոքորթութիւնն ուղեկից է լինում նրան ամենուրեք և նրան սեղանակից. մինչև անգամ մահից յետ էլ նա՝ շողոքորթութիւնը հետեւում է նրան դամբանական ճառերում ու լրագիրների էջերում և այսպէս խաբում յաջորդող սերնդին: Յաճախ տեսնում ենք այսպիսի փաս-

տեր և շուարած այս արտաքին անկարգութեամբ ու անգերծանելի շփթութիւնից — կարծում ենք թէ Աստուծոյ դատաստանը բնաւ գալու չի :

Այն կուրութեան դէմ, որ մեզ հաճոյական է իմաստութիւն անուանել, ես դնում եմ, եղբարք, Յիսուսի Քրիստոսի խօսքերը՝ «Յետ ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս ի մէջ նոցա»։ Նկատեցի՞ք արդեօք թէ որպիսի անգործութեամբ ասում այս Յիսուս Քրիստոս։ Նա իւր բոլոր վարդապետութեան մէջ միշտ հաստատում է անդառնալի կարգ և յայտնապէս ասում է, որ արդարութիւնը կատանայ իւր բաւարարութիւնը կատարելապէս ու աստուածային օրէնքի մի յովտն անգամ գետին չի ընկնիլ։ Նա այս հաստատում է պատմութեան ամենախաւար և ամենավրդովեալ ժամանակում, երբ աշխարհիս իշխողն էր Տիրերիոս, արդարադատութեան ներկայացուցիչը Պիղատոս, երբ Յուդայի գալիսոնը Հերովդէսի ձեռքումն էր, երբ երեսպաշտները վարդապետում էին տաճարում և մարգարէների վսեմ գրուածքները մենաձայնութեամբ կարդում էին դպիրներն, որոնք նրանց չէին էլ հասկանում։ Այսպիսի ժամանակ Յիսուս Քրիստոս հաստատում է, որ իւրաքանչիւր մարդ պէտք է տայ իւր գործերի և խօսքերի համարն, որ գաղտնիքը յայտնի կլինի, որ արդարութիւնը կյաղթանակէ թէ լրութեան և թէ մասնաւորի մէջ, թէ ընդհանուր աշխարհի և թէ մասնաւոր անհատի վիճակի մէջ։ Կհամարձակի՞նք արդեօք ասելու, որ Յիսուս Քրիստոս սխալուում է, որ Նա պակաս հեռատես և քաջատես է քան թէ մենք։ Զարմանալի համեմատութիւն կայ այստեղ. տգէտը կամ կիսուսը բնութեան մէջ ամենուրեք միայն խառնաշփոթութիւն է տեսնում և պատահմունք. բայց գիտնականը գիտէ, որ այն բազմազան և խճճուած երևոյթների մէջ ներգործում են կատարելապէս միակերպ և կանոնաւոր օրէնքներ, որ այդ խառնաշփոթ բազմազանութեան մէջ տիրում է զարմանալի միութիւն։ Մի՞թէ կարծում էք, որ բարոյական աշխարհում այլ կարգ է իշխում, մի՞թէ կարծում էք, որ եթէ բնական աշխարհում յաղթանակող են բնական օրէնքներն, արդարութեան, ճշմարտութեան և սրբութեան օրէնքներն այլապէս կլինին։ Դուք ի՞նչ կմտածէիք այն անմտի վերայ, որ

ծաղրելիս լինէր բնական օրէնքներն, անգգուշութեամբ վարուելով պայթող նիւթերի հետ, զորօրինակ դինամիտի հետ և ապուշ ծիծաղով պատասխանէր ձեր նկատողութեան և զգուշացուցման թէ ամեն ըոպէ կարող է այդ նիւթը պայթել և նորա մարմինը ծուէն ծուէն անել: Ինչպէս, մենք հաւատում ենք բնական օրէնքների գոյութեան և սիրով ճանաչում ենք, որ նոքա հաստատուն են և միթէ կարող ենք համոզուել, որ Տէրն, որ նոցա հետ կապում է երբէմն այնպիսի զարհուրելի հետեւանքներ, թոյլ կտայ անպատիժ խախտելու բարոյական աշխարհի աւելի վսեմ օրէնքները: Մենք հօ համոզուած ենք իսկապէս, որ այդ վերջին օրէնքները աւելի անմիջապէս վերաբերում են Աստուծոյ էութեան:

Տեսականապէս մենք կարող էինք երեւակայել մի աշխարհ, ուր մարմինների յատկութիւնքն այլ լինէին, քան որպիսիք այժմ նրանց ճանաչում ենք և այս երեւակայութիւնը բնաւ չէր կարող ոչինչ փոխել Աստուծոյ էութեան մէջ: Բայց ճանաչելով Աստուծուն սուրբ և արդար, կարող ենք արդեօք ընդունել մի աշխարհ, ուր ստութիւնն արդարութիւնից աւելի գնահատած լինէր և ապականութիւնը սրբութիւնից բարձր դասուէր: Կարող ենք մենք ընդունել այդպիսի կոչ ի մարտ, յանդգնաբար դէմ կանգնելով աստուածային օրէնքներին և մարդկութեան պատմութիւնը իբրեւ մի խղճալի կատակերգութիւն վերջացնելով, առանց վերջին վճռական խօսքն Աստուծոյ տալով: Ինչո՞ւ բարձրագոյն դատաստանի գաղափարն այդպէս սակաւ է ազդում մեր վերայ: Արդեօք այս այն պատճառով չէ՞, որ մենք մեզ համար օգտաւէտ ենք համարում աւելի կամ պակաս երկբայելը նորա մասին: Արդեօք ոչ այն պատճառով է, որ ահեղ դատաստանի միտքը մեզ խռովում է և անհանգիստ անում: Նրբէմն (դժբաղդաբար մեր օրերումս շատ յաճախ) մենք իմանում ենք մի անհաւատարիմ պաշտօնավարի դժբաղդ վախճանը, որ մոլորութեան ըոպէում գաղտնապէս սեպհականում է իրան մի գումար, որոյ վերայ բնաւ իրաւունք չունէր: Այս ըոպէից սկսած նորա բոլոր հնարագիտութիւնը, բոլոր նորա միտքն ու հանճարը, բոլոր կեանքը դէպի միակ նպատակ են ուղղած, այն է ամենքի աչքը շլացնել, սպասելով յարմար դէպքի կամ բաղդի յաջողակ բերմունքին, որ կարո-

դանայ իւր գործած յանցանքի հետքերը ջնջել: Նա կեղծում է վկայաթղթերը, թուղթը մունջ է և չէ բողոքում, օրից օր նա պէտք է այս առաջին խաբէութիւնը պաշտպանէ նորանոր խաբէութիւններով: Նա պէտք է կազմէ ամբողջ շարք հաւանելի հնարագիտութեանց և ջանայ առաջն առնելու այն պատահարների, որոնք կարող են նրան սպառնալ: Կարող էք ներկայացնել ձեզ թէ ինչ պիտի լինի այդպիսի մարդու կեանքը: Դուք կարծում էք, թէ այդպիսի անձնաւորութեան համար սիրելի կլինի խորհրդածելու այն ապագայի մասին, որ նրան սպասում է և որից չէ կարող խուսափիլ: Մի՞թէ դուք կարծում էք, թէ նա հանգիստ ու առանձնութիւն կորոնէ և նորա գիշերային քնոյ ժամերը չեն անցնիլ տխուր երազների մէջ: Բայց ցերեկը, արեգական պայծառ լոյսի ներքոյ նա հանգստացնում է իրան սովեստութիւններով, որոնք սովորաբար գործ են դնուում այսպիսի գէպքերում: Նա մտածում է այն բարոյականութեան վերայ, որ տիրում է սակարանում, ուր արժեթրղթերի խաղ է կատարուում, նա տեսնում է անարգար հարուստներին, հին խաբեբաներին, որոնք այսօր պատուաւոր մարդոց դիրք են բռնած և ազատ են մնացած օրէնքի պատժից, ուստի և նորա մէջ կարող է զարթել կրքերի բաւարարութեան և զգայական և աշխարհային կեանքի աւելի մեծ և ազդու գրգիռ և ցանկութիւնը: Նրբեմն նա մինչև անգամ բոլորովին հանգիստ է լինում, ոսկի երազները նկարագրում են նորա առաջ հարստութեան գեղեցիկ պատկերներ, և ահա յանկարծ իրականութիւնը կայծակի պէս շանթահարում է նրան: Նա կարծում էր, որ համար տալու օրը բնաւ չի գալ: Բայց այդ օրը գալիս է և իւր աղօտ և աղետաբեր լուսով լուսաւորում է երդուեալ դատաւորների դատարանն, ուր թշուառական պաշտօնատարն ամեն ինչ կհասկանայ ու կիմանայ, բայց արդէն ուշ է, որովհետև և նա կլսէ, որ իրան մեղադրում են իբրև վկայաթուղթ կեղծողի և գողի և կզգայ, թէ խայտառակութիւնն որպիսի մենակութեան մէջ է գցել նորան: Այսպէս ուրեմն կայ մարդկային դատաստան. այո՛ եղբարք և նա, չնայելով իւր բոլոր թերութեանց և պակասութեանց, վերջ ի վերջոյ յաղթանակում է: Աւելի ևս պէտք է լինի Աստուծոյ դատաս-

տանն և նորա օրը անշուշտ, անտարակոյս կգայ և մենք կկանգնենք նորա առաջ, որ կարդում է մեր հոգու խորքը ի կատարումն խօսքերի՝ թէ «գայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս ի մէջ նոցա»:

Ահա երեք ծառաներն էլ հերթով կանգնում են տիրոջ առաջ և պատմում են ինչ որ գործել են: Ճշմարիտը խոստովանի՞մ ձեզ եղբարք: Առակի այս մասը յաճախ ինձ զարմացրել է, կասեմ, մինչև անգամ վշտացրել է. Յիսուս Քրիստոս անհաւատարմութիւնն ու ծուլութիւնը վերաբերում է այն ծառային, որ ամենից փոքր էր ստացել և տիրոջ դատավճռի բոլոր ծանրութիւնը նորա վերայ է դնում:

2^է որ այս ծառայն մեզ երևում է մի տեսակ ներկայացուցիչ երկրիս փոքրների, այն մեծ բազմութեան մարդոց, որոնց սովոր ենք անուանել չքաւորներ, երկրիս անտուն ու անտիրականները: Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս նրան միայն յանցաւոր է հանում և արդար պատժի արժանի, այն ինչ աւելի շատ ստացողների և հաւատարիմ գտանուողների մասն և բաժին ընկնում են գովասանքն ու վարձատրութիւնը: Բայց արդեօք այնպէս է լինում աշխարհումս: Մի՞թէ այն ուղղութիւնը պիտի ունենար աստուածային դասն ու խրատը: Մի՞թէ աւելի աշխարհիս հզօրներին ու հարուստներին չբաժնէր և ուղղած լինէր այս խրատը: Աւելի լաւ չէ՞ր լինիլ արդեօք, եթէ մեզ անհաւատարիմ, երկշտ և իւր շնորհները ի զուր վատնող ներկայանար այն ծառայն, որ հինգ քանքար ստացաւ: Եւ փոխանակ անողոք խօսքերի թէ «որ ունիցի տացի և յաւելցի» փոխանակ այն խօսքերի, որոնք ըստ երևութին կարծես արդարացնում են բռնն զօրութեան չարագործութիւնքը, արդեօք աւելի յարմար չէր լինիլ զրել, «որ ոչ ունիցի, տացի և յաւելցի»:

Ի՞նչ պատասխանե՞ք այս հարցերին. Շատ պարզ է, այսպիսի յանդիմանութիւնը չէ կարող վերաբերիլ Յիսուս Քրիստոսին: Ճանաչում էք արդեօք մէկին, որ աղքատներին այնպէս սիրած լինի, ինչպէս Նա: Այս ամենքին յայտնի է, այս այնպէս աչքի է ընկնում, որ Աւետարանի հակառակորդները յաճախ ասում էին Նորա մասին, թէ Նա միայն աղքատներով է զբաղուած՝ իսկ հարուստներին

մասն և բաժին հանում է միայն սպառնալիք և անէծք՝ կարծես աւետարանը բնաւ չէ ճանաչում այնպիսի դարեշրջանի պիտոյքն որպիսին մերն է, երբ քաղաքակրթութիւնն ու յառաջադիմութիւնը չեն կարող այլապէս արտայայտուել ու պահպանուել, բայց եթէ մեծամեծ գումարների դիզմամբ: Աւեր ի վերոյ դիտողի համար այս բացատրութիւնը կարող է հաւանելի թուել: Իսկապէս, եթէ Յիսուս Քրիստոս մէկին առաւելութիւն էր տալիս, դա անշուշտ յօգուտ աղքատին էր: Նա ապրում էր նոցա մէջ, նոցանից՝ Նա ընտրեց իրան բարեկամներ, և աւելի աչքի ընկնելուն այն է, որ Նա իւր ներկայացուցիչ աշխարհիս երեսին աղքատին է նշանակում այնպէս, որ ահեղ դատաստանի օրը Նա չի ասիլ, «ես հզօր էի», ես սուրբ էի», այլ «աղքատ էի» և բոլոր յատկանիշներից, որ Նա իւր երկրաւոր կեանքի ժամանակ ունեցաւ, իւր փառաւոր զաւստեան ժամանակ Նա կ'ընէ միայն «Աղքատ» մակդիրը:

Սրանից յետ, եթէ մէկը պնդելու լինէր թէ Յիսուս Քրիստոս ցանկացել է շողոքորթիլ հարուստներէն, խոստովանում եմ, որ ինձ քաջութիւն և կարիք չէր լինիլ հարկաւոր վիճելու այդպիսւոյ դէմ, որովհետեւ այլ դէպքում Յիսուս Քրիստոս ցոյց է տուած թէ որքան մեծ է պատասխանատուութիւնը նոցա, որոնք շատ են ստացած, և առհասարակ յայտնի է նորա հայեցուածքն այս մասին հէնց այն խօսքերից, որոնք յաճախ կրկնում էին նորա սուրբ շրթունքները թէ «ում շատ տրուեցաւ, շատ էլ կ'պահանջուի նրանից»:

Ինչո՞ւ ուրեմն այս առակն էլ չէ բովանդակում իւր մէջ նոյն խրատը: Սորա պատճառն այն է, եղբարք, որ Յիսուս Քրիստոս ամենքին ասում է ճշմարտութիւնն, ինչպէս հարուստներին, նոյնպէս և աղքատներին, ինչպէս սրանց, նոյնպէս և հարուստներին անխտիր, որովհետեւ Նա Փրկիչ է ոչ թէ միայն որ և է դասակարգի, այլ Փրկիչ է բոլոր մարդոց, որովհետեւ եթէ Նա ճանաչում է և ցոյց է տալիս այն զարհուրելի վտանգներն, որոնք հարստութեան հետ կապուած են, Նա նոյնպէս լաւ ճանաչում է և աղատութեամբ մատնացոյց է լինում եւ այն վտանգների վերայ, որոնք յատուկ են միջակ և ստորին դիրք ունեցող անձանց, ըստ որում ցասման ու նախանձի ոգին նոյնպիսի չարիք է և մահաբեր հոգւոյ համար, որ-

քան Հարստին յատուկ մեծամտութեան և արհամարհանաց ոգին: Տարակոյս չկայ, որ Յիսուս Քրիստոս գիտէր, թէ այս աշխարհիս հզօրներն ինչպէս ի չարն են գործ դնում իրանց զօրութիւնը, հարուստներն իրանց Հարստութիւնն և արտօնութիւն վայելողներն իրանց արտօնութիւնքը. նա գիտէր թէ որքան գանձ, որքան նիւթական և բարոյական միջոցներ անարժան կերպով վատնուել և ոչընչացել են անափառութեան, շռայլութեան և հեշտասիրութեան անյատակ անդունդում: Նա գիտէր այս և գուցէ այս մասին մտածելիս նորա սուրբ շրթունքները «վայ ձեզ, հարուստներ», խօսքերը արտասանեցին: Բայց նա գիտէր նոյնպէս, որ Հասարակութեան այլ դասակարգերի մէջ էլ Հասունանում են ատելութեան և մահուան սերմերը՝ ապերախտութիւնը, յուսահատութիւնը, վհատութիւնը, բարկութիւնը և հայհոյութիւնը: Նա հէնց սրանց է մատնացոյց լինում երկչոտ և անհաւատարիմ ծառայի հոգւոյ մէջ: Ինձ մնում է ձեզ բացատրել այս վերջին խրատն. որ թէև յոյժ դժուարին է, բայց և այնպէս աշխատ կլինիմ կատարելու նոյն անկեղծութեամբ և ազատութեամբ ինչպէս մինչև ցայժմ:

Այժմ ես դառնում եմ դէպի նոքա, որոնք Աստուծոյ միայն մի քանքար ստացել են. արդեօք սոքա բացառապէս աղքատներն են: Այսպէս մտածելն առակի միտքը յեղաշրջել կնշանակէր, մենք արդէն ասացինք, որ քանքար խօսքով չպէտք է հասկանալ միայն երկրաւոր նիւթական բարիք, թէև ըստ սովորութեան ես մինչև ցայժմ էլ նրանց միշտ այդ միտքն եմ յատկացրել: Քանքարները նշանակում են մարդուս տրուած Աստուծոյ բոլոր պարգևները, ուստի և մի քանքար ստացող ծառայն նշանակ է այն ամեն անձանց, որոնք սակաւ են ստացած, թէ դաստիարակութեան, հասարակական դիրքի, մարմնաւոր և հոգեւոր ընդունակութեանց և թէ դրամական միջոցների ասպարիզում, մի խօսքով նոցա նշանակ է, որոնք անցնում են իրանց կեանքը չափաւորութեան սահմանների մէջ: Եւ ահա այս չափաւոր վիճակ ունեցողներն էլ իրանց փորձութիւնքն ունին և Յիսուս Քրիստոս նրանց է ակնարկում:

Առաջին փորձութիւնն ակներև է, որ նախանձն է: Դիցուք թէ

միայն մի անհաւատարիմ ծառայ ստացաւ մի քանքար իւր տիրոջից: Հաւանական չէ՞, որ նա կընդունէր այս երախտագիտութեամբ: Բայց նա տեսնում է, որ այլք կրկնապատիկ և հնգեպատիկ աւելի են ստանում իրանից, իսկ չէ՞ կամենում իրան հարց տալ, թէ արդեօք տէրն այդպէս անելով, չէ՞ վարուում իմաստութեամբ, որոյ նպատակն իրան հասանելի չէ: Նա ինքն իրան չէ հարցնում, թէ արդեօք որքան մեծ է նոցա պատասխանատուութիւնն, որոնք աւելի են ստանում, արդեօք ինքն ընդունակ է տանելու այդ պատասխանատուութիւնն ու չի ընկճուիլ արդեօք այն պաշտօնի բռնի ներքոյ, առ որ ձգտում է նորա սնափառութիւնը: Նա մինչև անգամ չի մտածել, որ տէրն իրան էլ սիրում է ուրիշների հաւասար և այն խոնարհ դիրքն որ իրան վիճակուած է, հէնց այդ սիրոյ ապացոյցն է: Նրան միայն մի միտք է պաշարում, — նա տեսնում է իրանից աւելի ստացողներին, որոնց համարում է տիրոջ սիրելիներ և արտօնեալներ, սոցա երջանկութիւնը նորա համար նախատանք է, նոցա մեծութիւնը զրկանք: Նախանձը տիրել է նորա բոլոր էութեան և իւր երկաթեայ ճանգերով մագլցում է նորա սիրտը:

Եւ ահա դուք տեսնում էք, թէ ինչպէս կատարուում է այստեղ այն խորիմաստ այլաբանութիւնն, որոյ մէջ Յիսուս Քրիստոս ասում է, թէ մի դէ, որ առժամանակ աքսորուած էր մարդու հոգուց, վերադառնում է բերելով իւր հետ այլ եօթը չարագոյն դուեր: Նախանձի հետ միասին երևում է և ապերախտութիւնը: Մառայն այլ ևս չէ խոստովանում և չի էլ ուզում իմանալ, որ իրան էլ տուած է մի քանքար: Տէրը նրան «չէ՞» չէ տուել — ինքն զրկուած է ժառանգութիւնից: Նորա ստացածը ուրիշի ձեռքում կարող էր հոյակապ ապագայ երջանկութեան հիմնաքար դառնալ, որովհետև ինչո՞ւ մի քանքարը չէ կարող երկու շահիլ և երկուսը չորս, ի՞նչ հարկաւոր է սահման դնել այնտեղ, ուր նրան ինքն Աստուած չէ դրել, ի՞նչ հարկ կայ նեղ շրջանի մէջ փակել նրան, որոյ համար Տէրը գծել է ուղիղ և լայն ճանապարհ կատարելագործուելու: Բայց անհաւատարիմ ծառան ոչինչ չէ ստացել. նա տեսնում է միայն այն, ինչ որ այլք ունին. սոքա են նորա բաժինը յափշտակել, Տէրը նրան մոռացել է, տէրը բռնաւոր է, որ հնձում է այնտեղից, ուր

չէ սերմանել, ժողովում է չսփռածը: Ապերախտութեան հետ միանում են պարտաճանաչութեան, ստացած պարգևի արհամարհանքը, ծուլութիւնն ու երկչոտ անշարժութիւնն, որոնք Աւետարանը միւս տեղերում ներկայացնում է մեզ իբրև օրինակ անմիտ, շռայլ կեանքի, ինչպէս իմաստուն և յիմար կուսանց առակի, նոյնպէս և մշակների առակի մէջ, որ իրանց տիրոջ բացակայութեան ժամանակ անձնատուր են եղած զբօսանաց և շռայլութեան: Իսկ այստեղ քանքարների առակում Ս. Աւետարանը թափանցելով մարդկային հոգւոյ խորքը, նկարագրում է նոյն յանցանքները մօայլ վհատութեան և տխուր զայրոյթի կերպարանաց ներքոյ, որ Հայհոյութիւն է Աստուծոյ դէմ: Ո՛հ, ես չեմ մոռանում, որ Աւետարանն օրհնում է վիշտն ու տրտմութիւնը. բայց Պօղոս առաքելոյ խօսքերից գիտենք, որ երկու տեսակ տրտմութիւն ու վիշտ կայ՝ մէկը տանում է դէպի կեանք, միւսը դէպի մահ, մէկը ամոքում է մարդուս սիրտը և ընդունակ անում Աստուծոյ մխիթարութիւնն ընդունելու և միւսը կոշտացնում է նրան. մէկը զղջման վիշտն է — միւսը վրդովման, մէկը սիրոյ և միւսը բարկութեան վիշտ է: Այսպէս Աւետարանն երբեք աղքատութիւնն առանձին վարձուց արժանի վիճակ չէ համարում, բայց նրան օրհնելով հանդերձ ներկայ առակի մէջ ցոյց է տալիս նորա եւ մահաբեր վտանգներն, ինչպէս և չէ վերաբերել նա վշտին ու տրտմութեան միայն մաքրիչ յատկութիւն, ինչպէս վարդապետում էր հին հեթանոսութիւնն, այլ ընդհակառակն ակնյայտնի կերպով նկարում է մեր աչքերի առաջ նորա փորձութիւնքն ու վտանգներն էլ: Ո՛հ ունայն և ինքնասէր վիշտ, վրդովեալ տրտմութիւն, սրտի մօայլ դառնութիւն, որ այլ ևս չէ կամենում յուսալ, չէ կամենում հաւատալ և որ անցեալի խորութեան մէջ թաղում է չճանաչած քանքարի հետ եւ ապագայի բոլոր յոյսերն ու ոյժերը: Բանաստեղծութիւնը կարող է նրան գովաբանել. աշխարհը կարող է նորա վերայ զարմանալ և հիանալ, բայց Աւետարանը մերկացնում է նրան և յամառ ու ապառում յուսահատութեան դիմակի ներքոյ ցոյց է տալիս անապաշաւ հոգի, որ անարգում է Աստուծոյ և ծաղրում է նորա սէրը:

Երկչոտութեան հետեւում է ամբարշտութիւնն, որ Աստուծոյ

դէմ Հայհոյանք է՝ «տէր» ես գիտէի, որ դու խիստ և չար մարդ ես, — այս խօսքերը բոլորի վերջաբանն են, պսակն են բոլորի: Մեր ամեն նախանձի, ապերախտութեան, և երկչոտ վշտի մէջ գտանուում է Աստուծոյ դէմ Հայհոյանքի սերմը: Այս սերմը գտանուում է եւ Աղամի «կինն», որ տուիր, խաբեց ինձ» խօսքերում և Կայէնի «միթէ՞ ես եղբօրս պահապանն եմ» խօսքերում, նոյնպէս և ամեն յանցաւոր սրտում, որ կամենում է իրան արդարացնել, ասելով, թէ Աստուած է որ իրան փորձութիւն է խրկել և այն ամեն ժամանակից վարդապետութեանց մէջ, որոնք Աւետարանի Արդար, Սուրբ և Բարի Աստուծոյ փոխարէն մեր մտաւոր աչքերի առաջ կանգնեցնում են ճակատագրի մռայլ և անհաճոյ պատկերը:

Նղբա՛րք, արդեօք դուք անհաւատարիմ ծառայի վիճակի այս աղ-դեցիկ ու զրաւիչ նկարագրութեան մէջ չտեսա՞ք մեր ժամանակի ոգւոյ մի քանի գծերն, որոնք դուք կարող էիք ձեր շուրջը նկատել և նոյն իսկ ձեր սեպհական սրտի մէջ:

Միթէ՞ դուք ամենքդ էլ չէք տեսնում ձեր շուրջն նախանձի ոգին, որ ամեն ինչ հարթել, ջնջել է ջանում, այն նախանձի, որ մեծ Սոկրատէսը լաւ ճանաչել էր և կոչեց նրան Հասարակ ժողովրդեան ախտ ու պատիժ: Նստում եմ դուք ամենքդ — որովհետեւ միայն աղքատների մէջ չէք հանդիպել նախանձին: Այս վերաբերութեամբ բոլոր դասակարգերն էլ միմեանցից յետ չեն մնում, որովհետեւ մոռանում են այն, ինչ որ իրանց տուած է, մտածելով միայն նորա վերայ, որ ուրիշներն իրանցից աւելի ունին և չճանաչելով նոցա իրաւունքն, թէ նոքա կարող են իրանցից աւելի ունենալ: Մշակը նախանձում է կապալառուին, սա նախանձում է վաշխառուին, որ իւր նախանձոտ Հայեացքը գցում է իրանից աւելի հարստի հոյակապ տան վերայ և վերջինն էլ ի վերջոյ չէ կարողանում անդորր սրտով լսել մի երեւելի և հին գերդաստանի մասին, որ կարծես ճնշում է նրան իւր աւատական մեծութեան բարձրութեամբ: Այսպէս նախանձը Հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ զարթուցանում է գչարութիւն և ատելութիւն և թշնամացնում է մարդոց, որոնք պէտք է միմեանց օգնական լինէին Հասարակական գործում, այսպէս նախանձն ատելի է և նգովելի ոչ միայն նորա

Համար, որ մեծ վտանգ է Հասարակութեան Համար և սպառնում է ամեն ճշմարիտ առաւելութեան, այլ աւելի ևս նորա Համար, որ նա թունաւորում է նրան անձնատուր սրտերն, զրկելով սրանց իրանց օրինաւոր և պատշաճ բաւականութիւններից էլ:

Ապերախտութիւնը փակում է ամեն դասակարգերի փոքրների և աղքատների աչքերը, որպէս զի չտեսնեն այնքան արտօնութիւնքն ու շնորհներն, որոնք վայելում են և որոնք մոռանում, միայն մտածելով նորա վերայ, ինչ որ իրանց պակասում է: Շուայի թուլամորթութիւնը վատնում է իւր բոլոր քանքարները անմիտ զուարճութեանց մէջ և անձնասէր անհոգ գործաւորը աշխատաւոր և կանոնաւոր կեանքը ծաղրելով անգամ վատնում մի քանի ժամուայ շուայտութեամբ ամբողջ գերդաստանի ապրուստն և օրինաւոր ամուսնութիւնից գերադաս է Համարում ապօրինի սիրահարական կապերը: Եւ այս ամենից աւելին սրբապիղծ Հայհոյութիւնն է, որ մերժում է Աստծուն և սրան մեղադրում, լուրջ և գիտնական սրբապիղծութիւնն, կամ գաղտնիքն ու կոպիտը, թէ և տարբեր իրանց արտաքին ձևով, բայց միևնոյնն ըստ Հիման, որ մարդուս Հպարտութիւնն է, որ կայանում է աստուածութեան մէջ:

Ականջ կախեցէք և լսեցէք այն ժխտին, որ գալիս է մեր մեծ քաղաքների մշակ և բանուոր դասի բերանից: Մի՞թէ այն աղօթքի ու Հաւատոյ ձայներ են: Աստուած մի արասցէ, որ այստեղ դատապարտութեան կամ անէծքի կամ բարկութեան մի խօսք արտասանեմ: Այլ ինձ աւելի շուտ պաշարում է իմ ոչնչութեանս գիտակցութիւնն, երբ ես խորհրդածում եմ այն ակնյայտի տխուր Հանգամանքի վերայ, թէ աճում է մեր բանուորների այն մասն, որ ոչ միայն օտարանում է քրիստոնէական Հաւատալիքներից, այլ և արհամարհում է սրանց, որ յայտնի անաստուածութիւնն աւելի և աւելի կշիռ է ստանում նոցա աչքում իբրև ազատ մտքի երաշխաւորութիւն և ճշգրիտ նշանակ ժողովրդականութեան: Ես ըզգում եմ իմ ոչնչութիւնս, որովհետեւ գիտեմ, թէ որքան բազմաթիւ են և բարդ այդ տխուր երևոյթի պատճառները: Ես չեմ զարմանում, որ անմիտ գրգռութեանց ու Հալածանաց Հետեւանքը լինում է եւ ոչ պակաս խիստ բողոքն, որ եթէ մի լրագիր Բարթո-

զիմէոսիան գիշերը անուանում է բարեպաշտ և փրկարար արիւն-
հեղութիւն, անշուշտ, մոլեռանդութեան այսպիսի տմարդի, խիստ
սատուրնալեան տօնախմբութեան հանդէպ բնականաբար պիտի
ծագեն նմանօրինակ հանդէսք ամբարշտութեան: Բայց այս բացա-
տրութեամբ փաստի ծանրութիւնը չէ թեթեւանում: Ահա մեր
շուրջը կան միոլիոնաւոր մարդիկ, որ աւելի և աւելի վարժուում
են ապրելու առանց Աստուծոյ, առանց յաւիտենական կեանքի յու-
սոյ և ծաղրելու ձեր դաւանութիւնքն, որովհետեւ նոցա համար
Աստուած միայն և եթ բռնաւոր է, խիստ տէր է, որ հնձում է
այնտեղից, ուր չէ սերմանել և հաւաքում է այնտեղից, ուր չէ
սփռել: Ահա մեր շուրջն է բազմութիւն մարդոց, որոց կեանքը
ծանր է և դառն, որոնց միայն բրիստոնէական կրօնը կարող էր
տալ լոյս և մխիթարութիւն այդ կեանքի ծանրութիւնը տանելու
համար — և դուք տեսնում էք, որ այդ մարդիկ անմիտ շլացման
մէջ ծափահարում են ժամանակակից ամենանյութալի և դժնդակ
վարդապետութեանց, այնպիսի վարդապետութեանց, որոնք մարդ-
կային կեանքը ներկայացնում են իբրև մի խղճալի խաղ կոյր գո-
րութեանց, փակում են մարդոց առաջ երկնքի դռներն, շրջափա-
կելով նոցա կեանքը խղճուկ նեղ շրջանակի մէջ և գերեզմանի մօտ
անկարող են մարդկային վշտերին որ և է բացատրութիւն տալու և
մարդկային արտասուքներին որ և է մխիթարութիւն, անկարող են
տալու յոյս արդարութեան յաղթանակի և իրանց սիրելեաց հետ
տեսնուելու կարելիութեան մասին յաւիտենական սիրոյ գոգում:
Նղրա՛րք, այսպիսի դէպքում մենք չպէտք է մեր սրտերը լցնող դառն
զգացմանց իշխանութիւն տանք, այլ պէտք է սիրենք նրանց, որոնց,
սիրում է Քրիստոս. հարկ է բոլոր այդ անմիտ լուտանքների, կա-
տակների և հայհոյանաց վերայ մեզ լսելի լինի Խաչեցելոյն աղօթ-
քը, որ միջնորդում է յանցաւորների համար՝ ասելով. «Հայր ներքի
դոցա, որովհետեւ չգիտեն, ինչ են գործում»:

Ո՛վ եղբա՛րք, ոյք միայն մի քանքար ունիք. Մի՛թէ դուք գիտէք,
թէ ինչ է ձեր վերաբերութեամբ Նորա զիտաւորութիւնն, որ
ամենքիս վիճակն է որոշում և մեզ ամենքիս հրաւիրում է լինել
Նորա արքայութեան մշակ — ոմանց առաջին տեղի և այլոց վեր-

ջին տեղի համար, բայց ամենքին էլ, իբրև մասնակիցներ նոյն սիրոյ և յաւիտենական փառաց: Մի՞թէ դուք երբէք չէք կարդացել աւետարանի մէջ հետեւեալ խորհրդաւոր խօսքերը. «յետինք եղիցին առաջինք և երբէք չէք խորհրդածել, որ յաճախ երկնային փառքը առաջանում է երկրաւոր նախատանքից ու արհամարհանքից: Մի՞թէ դուք երբէք չէք մտածել այն մասին, որ Աստուած փառաւորում է իրան իւր ծառաների տկարութեան և անզօրութեան մէջ:

Դուք, որ կարծում էք, թէ Աստուած թողել է ձեզ, դուք որ ձեզ ժառանգութիւնից զրկած էք համարում այս աշխարհումս, յետ նայեցէք և սովորեցէք Ս. Գրոց մէջ գտնելու ձեր նախնեաց ըստ հոգւոյ և այն սերունդն, որոյ զաւակները կամենում է Աստուած որ դուք լինիք:

Քանի քանքար ստացաւ Աւետարանի այն այրին, որ տաճարի դրանը միանգամ անցաւ Քրիստոսի մօտով և արժանացաւ Նորա Աստուածային ուշադրութեան. Ո՛վ. քոյրե՛ր, ոյք լսում էք ինձ, դուք, որոց սրտերը լի են դառն վշտով դժբաղդութեան կամ աղքատութեան պատճառով, նայեցէք այս մեծ օրինակի վերայ: Կայ արդեօք ձեր մէջ մի այնպիսին, որ երկու լուծայից աւելի ոչինչ չունենայ, թէգուց մինը, որ կարողանայ տրտնջալ Աստուծոյ դէմ, երբ Աւետարանի այրին իւր աղքատութեամբ ամենաթանգագին այնպիսի դանձ ձեռք բերեց, որպիսին սակաւ անգամ է գանձել եկեղեցին ի փառս Աստուծոյ: Նախ քանքար ունէր Մարիամն, որ Քրիստոսի ոտքերի մօտ կոտորեց շիշն ու նոցա վերայ թափեց թանգադին նարդեան իւզն, որ Աստուծոյ տունը յաւիտենա լցրեց անուշահոտութեամբ:

Ի՞նչ ունէր Պետրոս առաքեալն, երբ Երուսաղեմում կանգնելով թշուառ ի ծնէ կաղի առաջ, ասաց «Արծաթ և ոսկի ոչ ունեմ, բայց զոր ունեմս՝ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ արի՛ և գնա՛» (Գործք. գ. 6.):

Ի նչ ունէր ս. Պօղոս առաքեալն, որ օրական աշխատանքից վաստակած ձեռքով զրոււմ էր Կորնթացւոց այս զօրեղ խօսքերը՝ «իբրև տնանկէ և զբազումս մեծացուցանեմք, իբրև ոչինչ ունիցիմք, և զամենայն ինչ ունիմք» (Երկրդ. Կորնթ. գ. 10): Առաջին դարե-

րի քրիստոնեայք ի՞նչ ունէին, երբ նոքա, զուրկ ամենից, ինչոր զարմացնում է մարդոց և յաջողութիւն է տալիս նրանց կեանքի մէջ, նայում էին Հին աշխարհի հսկայական մեծութեան վերայ, նորա փիլիսոփայական դպրոցների, նորա պատմութեան, նորա զօրութեան վերայ, ասելով, թէ այդ ամենը պէտք է խոնարհի և ըստորանայ իրանց Վարդապետի Խաչի առաջ, ինչպէս խորտակուեցաւ Ռանիէլի երազի զարհուրելի արձանն, երբ Աստուծոյ լեռունից փոքրիկ քարն ընկաւ նորա վերայ: Թո՛ղ ինձ չառարկեն, չպատասխանեն, որ ես այստեղ խօսում եմ առաջին օրերի հրաշքների մասին, երբ Հոգին սուրբ լցնում էր սրտերը: Աստուածային պատմութիւնը կանգ չէ առել այնտեղ: Ես կհամարձակեմ ասելու, որ այն մեծ գործերն, որ կատարել է եկեղեցին, նոցա գործածն է, ոյք միայն մի քանքար են ստացած: Գիտեմ, մենք այլապէս ենք դատում, մենք հեռուից միայն բարձր գագաթներն ենք տեսնում, փառաւոր անուններն ու աչքի ընկնող սիրագործութիւնքը:

Նայեցէ՛ք գործի վերայ մօտիկից, եկեղեցւոյ կեանքի ամուր և անխախտելի Հիմն նորա ամենամեծ դարեշրջաններում կազմել են անյայտ քրիստոնեայք, լուիկ ու ծածուկ ողորմածութեան այդ դիւցազները, հազարաւոր անյայտ ու աննշան մարտիրոսներ, որոնց անունները լցնում են առաջին դարերի սրբոց վկայաբառնութեանց մատենաների երեսները: Այո՛, հասարակ քրիստոնեայք տարան այդ յալթութիւնը Աստուածային մեծ պատերազմում — հիանալի տեսարան, արդիւնաւոր կերպարանափոխութիւն, որ արդարացնում է Պօղոս առաքեալի հանդիսաւոր խօսքերը՝ թէ «Եւ զանտոհմն աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոյինչսն, զի գէսն իմն խափանեսցէ» (Առ. Կորնթ. ա. 18):

Ահա ինչ կարող է կատարել մարդկային կեանքը Աստուծոյ Հոգւոյ ազդմամբ: Եղբայրք, ինչո՞ւ ձեր կեանքն էլ չպիտի նմանի այս կեանքին: Ինչո՞ւ դուք էլ չպիտի ցոյց տաք աշխարհին, թէ ինչ կարող է Աստուած արդիւնաւորել ձեր տկարութիւնից և ոչինչութիւնից: Ինչքան արդիւնաւոր կլինի ձեր կեանքն, եթէ այսպիսի զգացմունք թափանցէ նրան և բարձրացնէ նրան, եթէ ապերախտութեան մռայլ վշտերի փոխարէն նրան տիրէ սիրոյ ուրախ զգացմունքը:

Երանի ձեզ, եթէ այսուհետեւ Աստուած ձեզ փոքրում հաւատարիմ կգտնէ, առաջ քան ձեզ շատը յանձնէր, հաւատարիմ աշխարհիս դառնութեանց ու տհաճութեանց մէջ, բայց արժանիք ստանալու ժառանգութիւն երկնքում, հաւատարիմ կարճ ժամանակով, որ մենք կեանք ենք կոչում, բայց ժառանգողք յաւիտենական փառաց և երջանկութեանց մէջ: Ամէն:

(Բերալէ).

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

ԽԹ.

(Շաբաթական-Ընթերցանութիւն).

Սուրբ Գեղարդայ նման վիմափոր այս եկեղեցին իւր տեսակում հազուագիւտ և նշանաւոր երևոյթ կազմելով, տարաբաղդաբար չէ տալիս մեզ բաւականաչափ նիւթ իւր պատմական կեանքի մասին: Միակ տեղեկութիւնն, որ մեզ մատչելի է, մի հատիկ արձանագրութիւնն է, որ մասամբ զեղծուած մնացել է վերջին եկեղեցու հարաւային պատի վերայ: Ահա նորա պատճենը.

« Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան Յակոբայ և քահանայ
« յապետութեան գաւառիս Տէր Սարգսի և ի տէրութեան իշխանաց
« իշխանին Պռոշոյ և որդւոց նորին Պապաքին և Հասանայ և որ-
« դւոյ Էաչոյ և մօր նորին Պարոն, ես Մատթէոս վարդապետ կանգ-
« նեցի և կատարեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ
« և Պետրոսի և ծնողաց մերոց և պարոնաց Մ. Բ. և ամենայն հաւա-
« տացելոց, որք մտանէք, Աստուած ողորմի ասէք մեզ և ձեզ եղիցի.
« Թվին 21, Ե (735 — 1286): »

Կան այլ ևս երկու արձանագրութիւն հիւսիսային պատի վերայ, բայց այնքան եղծուած, որ կարգալն անկարելի է: